ՀԱՂՈՐԴԱԳԻՐ

Հայաստանում ԵՄ Թվինինգ ծրագիր վիճակագրության ոլորտում (փուլII)

N°1

Եռամսյակային հաղորդագիր՝ հրապարակված ԵՄ կողմից ֆինանսավորվող «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – 2-րդ փուլ» Թվինինգ ծրագրի ԹՄԽ գրասենյակի կողմից

Սա ԵՄ *«Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – 2-րդ փուլ»* Թվինինգ ծրագրի առաջին հաղորդագիրն է:

ԵՄ կողմից ֆինանսավորվող և 1 մլն եվրո բյուջեով սույն ծրագիրը մեկնարկեց 2015 թվականի օգոստոսին և իրականացվելու է Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից Դանիայի վիճակագրության՝ որպես գլխավոր գործընկերոջ, ինչպես նաև Ֆինլանդիայի, Իտալիայի և Լիտվայի վիճակագրական ծառայությունների փորձագետների հետ համագործակցությամբ:

Ծրագրում ընդգրկված կլինեն և օգուտներ կքաղեն նաև մի շարք այլ ազգային շահառուներ:

Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի պաշտոնական վիճակագրության արդիականացմանը՝ ներդնելով ԵՄ ստանդարտներին համապատասխանեցված վիճակագրության նոր մեթոդաբանություններ՝ ուժեղացնելով պաշտոնական վիճակագրության տարածումը հանրության շրջանում:

Ծրագիրը պաշտոնապես մեկնարկեց 2015թ. սեպտեմբերի 15-ին Երևանի Կոնգրես հյուրանոցում: Բացման խոսքով հանդես եկան ՀՀ ԱՎԾ նախագահ Ստեփան Մնացականյանը, ՀՀ-ում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Հոա Բին Աձեմյանը, և Եվրոստատի վիճակագրական համագործակցության բաժնի ղեկավար Կլաուդիա Յունկերը:

Դանիայի վիճակագրության տնօրեն Քարստեն Ուլրեկ Զանգենբերգը ելույթ ունեցավ «Անկախությունը, իմացությունը և վարչական ռեգիստրները վիճակագրությունում» թեմայով: «Վիճակագրությունը դա փարոս է ՛տեղեկատվության ծովում՛, իսկ պաշտոնական վիճակագրությունը դա այն է, ինչն ունի իմացություն ծնելու մեծ ներուժ», ասաց պարոն Զանգենբերգը:

Ծրագրի ԱԵ ղեկավար Շարլոտտե Յուլ Հանսենը և ԹՄԽ Պիտեր Բոնստեդ Անան Հանսենը Դանիայի վիճակագրությունից հանգամանորեն ներկայացրեցին ծրագիրը:
Բացման արարողությանը ներկա էր շուրջ 80 մասնակից, այդ թվում բարձրաստիճան պաշտոնատար անձինք և ներկայացուցիչներ Հայաստանի շատ նախարարություններից, տարբեր միջազգային կազմակերպություններ, ինչպես նաև ԶԼՄ-ներից:

Սույն հաղորդագրի թողարկման ժամանակ ծրագիրն արդեն իսկ եզրափակել է առաջին եռամսյակը և իրականացվել է ծրագրի վեց ոլորտներից թվով չորս գնահատման առաքելություն: Դրանք առնչվում են տարածմանը, ժողովրդագրական վիճակագրությանը, աղքատության վիճակագրությանը և նորարարական վիճակագրությանը:

Բացման արարողությունը Երևանի Բեսթ Վեսթերն Կոնգրես հյուրանոցում 2015թ.սեպտեմբերի 15-ին

Այս չորս ոլորտների համար գնահատվել է ընթացիկ իրավիճակը և պլանավորվել են հետագա քայլերը, որոնք քննարկվել են ԱԵ փորձագետների և ՀՀ ԱՎԾ միջև: Որպես կանոն, յուրաքանչյուր բաղադրիչի շրջանակներում բոլոր համապատասխան շահառուները հրավիրվել են մասնակցելու ամենակարևոր շնորհանդեսներին և քննարկումներին:

Ծրագրի առաջընթացի հետ մեկտեղ համապատասխան փաստաթղթերը և նյութերը բեռնվում են ծրագրի կայք-էջում անգլերեն և հայերեն լեզուներով: Ծրագիրը նաև ունի ֆեյսբուքյան էջ, որը կանոնավոր կերպով թարմացվում է: Հղումները տրված են ստորև:

Ծրագրի երկրորդ եռամսյակին նախատեսվում է հինգ առաքելություն Հայաստանում:

Թվինինգ ծրագրի հիմնական թեմաները

1. Վիճակագրության տարածում
Վիճակագրական տեղեկատվության տարածման բարելավված համակարգ, մշակված տեղեկատվության տարածման համակարգի ռազմավարություն, սպառողների բավարարվածության հետազոտության արդիականացված, փորձարկված և հրապարակված հարցաթերթ

2.Ժողովրդագրական վիճակագրություն
Բարելավված կենսական և միգրացիոն վիճակագրություն, տվյալների հավաքագրման բարելավված մեխանիզմների ռազմավարություն (թղթային աղբյուրներից անցումվարչական ռեգիստրների)

3. Աշխատաշուկայի վիճակագրություն
Հաշվարկված և հրապարակված աշխատանքի գին, աշխատանքի գնի ինդեքս, ինչպես նաև վաստակների վերաբերյալ հաշվարկված և հրապարակված կառուցվածքային վիճակագրություն

4. Աղքատության վիճակագրություն
Ընդհանուր առմամբ սոցիալական բացառումների, և մասնավորապես երեխաների սոցիալական բացառումների վիճակագրության ներդրում և հաշվարկում

5. Նորարարական վիճակագրություն
Ներդրված նորարարական վիճակագրություն, նորարարական վիճակագրության մշակված մեթոդաբանություն, կանոնավոր արտադրման և հրապարակման պլան

6. Ջրի հաշիվներ
Առանցքային շահառուների հետ ջրի հաշիվների մշակված մեթոդաբանություն, ջրի կազմված հաշիվներ

Լրացուցիչ տեղեկությունների համար.
Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն (ԹՄԽ)
pah@dst.dk

Հեռ. + 374(0)99077916

Կայք-էջ. www.dst.dk/armenia2015

Ֆեյսբուքյանէջ. www.facebook.com/EU-Armenia-Twinning-Project-on-Statistics-II-801732856606449

STATISTICS DENMARK

Այս ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է Դանիայի վիճակագրության կողմից՝ Ֆինլանդիայի, Իտալիայի, Լիտվայի վիճակագրությունների հետ համատեղ:

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Սույն հրապարակման մեջ տեղ գտած տեսակետները հանդիսանում են Դանիայի վիճակագրության պատասխանատվությունը և կարող են չարտացոլել Եվրոպական միության տեսակետը: